միւս նորագոյն գրողների՝ Մաքսիմ Գորկու և Լ. Անդրէևի հետ։ Ի պատիւ Կորոլէնկոի յուլիսի 14 ին Պ. Բուրդում տեղի է ունեցել մի մեծ հացկերոյթ, ուր ներկայ են եղել աւելի քան 450 հոգի։ Հացկերոյթը պատրաստուած էր 12 պարբերական հրատարակութիւնների նախաձեռնութեամբ և մասնակցում էին ռուս նոր գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներ, խմբագիրներ, պրոֆէսսորներ, բանաստեղծներ, գրադէտներ և այլն։ Հանդէսի ժամանակ կարդացուել են բազմաթիւ ուղերձներ, որոնց մէջ նաև Պ. Բուրդի համալսարանի ուսանողներից, Մոսկուայի 1250 ուսանողներից, Մոսկուայի դպրոցական 850 սաներից և բազմաթիւ խմբագրութիւններից, հասատատութիւններից, խմբերից և անձերից և վերջապէս հրէայ ուսանողներից։

Երկու ժողովրդական գրողների հրատարակութիւնները տպուած են ռուսերէն բազմաթիւ տպագրութիւններով, իսկ նոցա գեղեցիկ վէպերից ու պատկերներից շատերը թարգմանուած են հայերէն և մեծ մասամբ տպուած «Լումայի» էջերում։

—

ՏՆՍՑԻՆ ԲԺՇԿԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Այս օրերս լոյս տեսաւ բժշկապետ Գ. Բաբեանի խմբագրութեամբ հրատարակուող բժշկարանի երկրորդ ստուար հատորը՝ Գիւտ ա. քահ. Աղանեանի և պ. Իսահակ Ցարութիւնեանցի թարգմանութեամբ։

Այդ հատորը պարունակում է իւր մէջ վարակիչ, ներքին, կաշուի և վենէրային հիւանդութիւնները, ականջի դեղարան և բժշկական բառարան։ Գրքին կցուած է մալեարիան տարածող մոծակի զանազան ձևերի նկարը։

—

ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԳՐՉԱԳԻՐՆԵՐԸ ՎԱՃԱՌՈՒՆԵ

Մասնաւոր հայ անհատներին պատկանող ձեռագիր ժողովածուներից ամենահարուստը պ. Աւետիք Էնֆիաճեանցինն է, որ յիսուն երկար տարիներ գրավաճառի խանութ ունենալով Թիֆլիսում՝ միջոց է ունեցել հետզհետէ ի մի ժողովել իւր ձեռքն անցած հայ գրչագիրները։ Շատ հայ և նոյն իսկ եւրոպացի բանասէրներ ծանօթ են այդ թանկագին հաւաքածոյին։

Որքան մեզ յայտնի է, այդ ձեռագիրները գնել ցանկանում էին բազմաթիւ հայ հաստատութիւններ և մասնաւոր մարդիկ։ Սակայն, ինչպէս այժմ հաղորդում են մեզ ամենահաստատ աղբիւրներից պր. Ֆինկը ամսոյս 4 ին հաղորդել է իրան Էնֆիաճեանցին, որ Տիւբինգէնի համալսարանի մա-

տենադարանի վարչութիւնը հայագէտ պրոֆէսոր Ֆէտտէրի միջնորդութեամբ որոշել է գնել այդ ձեռագիրները և արդէն կարգադրել անմիջապէս վճարել և գրքերն ընդունել այստեղ, որտեղից կուղարկուին Տիւբինգէն։

—

ԱՅՆԹԱՊԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ.

Ամբողջ Կիլիկիայի մէջ ամենից փառաւոր և հոյակապ եկեղեցին Այնթապի Մայր եկեղեցին է, որի ճարտարապետական յատակագիծը պատրաստել է հանգուցեալ արքունի ճարտարապետ Յակոբ Պէյ Պալեանը, որը երկար տարիներից ի վեր չինւում է և որի չինութեան վերայ ծախք է եղել մօտաւորապէս 200,000 ռուբլի։ Այժմ, ինչպէս հաղորդում է «Բիւզանդիոնը», Մայր եկեղեցու չինութիւնը աւարտուած լինելով՝ մօտ օրերս նաւակատիքն ու օծումը կատարել է Կիլիկիոյ Տ. Սահակ կաթուղիկոսը։

—

ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողները անշուշտ յիշում են, որ գեր. Տ. Բարդուղիմէոս եպիսկոպոս Ճուղուրեանցը իւր «Սորենացուն Խ. պէտք է հասկանալ» գրքոյկում մեր դէմ գրած մի յօդուածում ասել էր, թէ այն նորագոյն սիստէմի ձուլիչ մեքենան, որ մենք դնել էինք Բերլինում, ինչպէս *ղոռղա* երկաթ ընկած է ս. Էջմիածնի տպարանում։ Մենք պատասխանեցինք, ի միջի այլոց, որ մեքենան անպէտք ընկած էլ կմնայ միշտ, մինչև որ մասնագէտ հմուտ վարպետ չբանեցնի այն։ Այժմ մեզ հաղորդում են ս. Էջմիածնից, որ անցեալները հրաւիրուելով այնտեղ Թիֆլիսից մասնագէտ ձուլարանապետ պ. Մադէրը՝ կարգի է դրել ձուլիչը, որ այժմ բանում է խիստ կանոնաւոր կերպով և այնքան գործ է արտադրում, որ տպարանը դիտաւորութիւն ունի տառերի պատուէրներ ընդունել ուրիշ տպարաններից։

—

Խմբագրութիւնս ստացաւ Նորին սրբութիւն ամ. Հայոց վեհ. Կաթուղիկոսից Հայրապետական Դիւանի գրութեամբ երկու օր. Էջմիածնատիպ օրացոյց նոր տարուայ շնորհաւորութեան առիթով։